ցանից ազատ մնալու միջոցներին։

Հեղինակի շերամապահական փորձերը կատարուած են Սագուրամօ գիւղում 1886 թուականին, Աղդամում 1887-ին և Զիլնի գիւղում 1888-ին։ Այդ փորձերի նկարագրութեան ընթերցումից մնում է մի տպաւորութիւն, որ գիտութիւնը, շերամապահութեան արհեստին հմուտ լինելը, մեծ դեր ունի կատարելու մեր երկրում։ Այդ փորձերից երևում է, որ մեր տեղական ժողովուրդը՝ այն ինչ լաւ է, շահաւէտ, եթէ ոչ սկզբից, գոնէ կամաց կամաց գնահատում է։

Աղդամում Թուրք ժողովուրդը, ուր գործել է գրքոյկի հեղինակը, սկզբում ծիծաղով է վերաբերուել դէպի նորութիւնները. բայց երբ նկատել է իւր և պ. Մելիք-Շահնազարեանցի պահածի մէջ առաջացած տարբերութիւնը, երբ տեսել է, որ իւր խնամած որդն պեբրին և ֆլաշրի հիւանդութիւններով հետզհետէ կոտորւում է, մինչդեռ Մելիք-Շահնազարեանինը հաւասար զարգանում է և վաղահաս բոժոժ է լինում, այն ժամանակ սկսում է սաստիկ հետաքրքրուել հեղինակի խնամելու եղանակով։

Գրքոյկի վերջում զետեղուած են աստիճանաբար մեծացող որդնի և նորան պահելու գործիքների նկարները։

Հեղինակը մի քանի տեղ անուշադիր է եղել դէպի իւր գործածած լեզուն, և նախադասութիւնները միմեանց հետ կապել է անկանոն կերպով։

Բայց առհասարակ գիրքը լաւ տպաւորութիւն է թողնում և ցանկալի է, որ նա տարածուի մեր շերամապահական շրջաններում։

Գլ.

ԳԵՐԲԵԼ, ԱԴՈԼՖ.—*Շեքսպիրական պրոբլեմներ։ Պլանը և միութիւնը «Համլետի» մէջ* 1890 թ. (գերմաներէն)։

Յայտնի է, թէ ինչ ահագին գրականութիւն կայ Շեքսպիրի «Համլետ» ողբերգութեան նուիրուած։ Բայց դորա մասին սովորական ընթերցողները միայն լսել են և միմիայն մասնագէտ-գրականագէտները իսկապէս գաղափար ունին այդ գրականութեան մեծութեան մասին։ Անթիւ հատորներ կան գրուած այդ ողբերգութեան վերաբերմամբ, որոնք բոլորն էլ աշխատում են լուծել այս խնդիրը, թէ ինչ է ներկայացնում այդ դանիական պրինց Համլետը, որը այդքան և այդքան տատանւում է վրէժխնդիր լինել իւր հօրեղբօրից, որը սպանել էր Համլետի հօրը, սորա գահը ձեռք բերելու համար։ Եւ որովհետև «Համլետը» նոյնքան քննադատուել է, որքան և հիացուել, պէտք էր կարծել, թէ նոր այլ ես ոչինչ չի կարելի ասել այդ մասին։ Ադոլֆ Գեբելը սակայն հանդէս է գալիս մի նոր հայեացքով և խնդրին մի նոր լուծումն է տալիս, որը մեզ թերևս զարմացնի իւր պարզութիւնով։

Բանը սա է, որ մենք ամենքս նախապաշարուած ենք քննադատում Համլետին. մենք ամենքս այնքան լսած ենք դանիական պրինցի անվճռողականութեան մասին, որ չենք կարողանում աղատ մնալ մեր կարդացածից ու լսածից։

Ամենագլխաւոր խնդիրը, որ ամեն ձևերով նոր-նորից առաջադրուած է եղել մինչ այժմ, այս է եղած՝ ինչու է տատանուում Համլետը։— Գելբերը սակայն, փոխանակ այդ խնդրով զբաղելու, ուղղակի պատմում է ողբերգութեան գործողութիւնը և, կարող էք երևակայել, որ նա ոչինչ չի դտնում, որ կարողանար մեզ համար մի խնդիր լինել։ Եւ իրօք, ինչ է պատահում «Համլետի»մէջ։ Սովորապէս, կարճ և պարզ լինելու համար, մենք ասպէս ենք սկսում՝ «Մի մարդասպանութիւն է կատարուած»,.. և ալն։ Ի հարկէ, երբ այնպէս սկսենք պատմել, մեզ աւելորդ փիլոսոփայութիւն կը թւան այն բոլոր խօսքերը, ինչ լետոյ արտասանում է դանիական պրինցը. զարմանում ենք, որ մի մարդ, որ այդքան կատաղած է իւր հօրեղբօր նենգութեան վերայ, փոխանակ ուղղակի նպատակին դիմելու՝ նորան սպանելու, դեռ տատանուում է։ Բայց բանն էլ հէնց նրանումն է, որ հանդիսատեսը այդ սպանութեան մասին միայն այնքան դիտէ, որքան այդ ցոյց է տրուում բեմի վերայ. մի չը նախապաշարուած հանդիսատես իսկոյն կը պատասխաներ, թէ ոչ թէ սպանութիւն է կատարուել, այլ «մի ուրուական երևաց, որը մեզ պատմեց, թէ մի սպանութիւն է կատարուել»։ Զանազանութիւնը մեծ է և պարզ, որովհետև դորան լսողդում է այս հարցը՝ «ուրուականի ձայնը լսելուց լետոյ, ինչն է Համլետի պարտականութիւնը»։ Դորա պատասխանը այս պէտք է լինի, թէ Համլետի պարտականութիւնն է համոզուել այն բոլորի մէջ, ինչ նա լսեց։ Ահա, երբ այսպէս խնդիրը դրած կը լինենք, մենք կը տեսնենք, որ աւելորդ է եղած Համլետի տատանման մասին այնքան խօսելը, քանի որ Համլետը ամենևին չի տատանուում։ Նա ապացոյցներ է որոնում և երբ նա ապացոյցներով համոզուում է՝ իւր վճիռը գործադրում է։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ այն լանդիմանութիւնը, որ մինչ այժմ կրիտիկոսները արել են Շեքսպիրին «Համլետի» առիթով, մաացածին է և որ ինքը «Համլետը» ամենևին տեղիք չի տալիս այն խընդրին, որ մինչև այժմ այնքան զբաղեցրել է կրիտիկոսներին, որոնց անվերջ վիճաբանութիւններին այժմ մի անդամ ընդ միշտ վերջ է տրուում։

«Համլետի» քննադատութեան համար այս նոր ճանապարհը բացել են ամենից առաջ Կլայն Վերդեր և Կարլ Վերդեր եղբայրները, բայց Ադոլֆ Գերբելը, իւր ներկայ գրքով, ամենից հեռուն է գնացել այդ ճանապարհի վերայ։ Քայլ առ քայլ հետևելով Շեքսպիրի ողբերգութեան, նա ապացուցանում է, որ Համլետը ամեն մի վայրկեան աշխատում է հաւատաբիմ մնալ իրան, որով և ջնջում է մինչ այժմ մեր ունեցած դաղափարը թոյլ իշխանաղնի մասին, որը իբր թէ այնքան մեծ է խօսքերով և այնքան թոյլ գործքերով։ Մենք

այժմ տեսնում ենք Համլետին իւր իսկական տեսքով, և միայն այժմ չպատնազործւում է նորա վիճակի իսկական ողբերգական լինելը։

Ն.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) ՇԻՐԻԱՆՋԱԴԷ.—«ԶՈՒՐ ՑՈՑՍԵՐ» (վէպ)։ *Արտատպւած պատկերազարդ «Արձագանք-ից»։ Թիֆլիս, տպ. Ց. Մարտիրոսեանցի, գինն է ր.։*

2) ԽԱՀԱԹԵԱՆ, ԴՐ.—«*Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւնը Խորէն ծ. վ. Ստեփանէի թարգմանութեամբ*» (*քննադատութիւն*)։ *Արտատպւած «Արաքս» պատկերազարդ հանդիսից։— Ս. Պետերբուրգ, տպարան Սկորոխոդովի, 1890 թ., գինն է 25 կոպէկ։*

3) ԹՈՒՄԱՆՆԱՆՑ, ՑՈՎՀԱՆ.—«*ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ*»։ *Մոսկւա, տպարան Մ. Բարխուդարեանցի, 1890 թ., գինն է 35 կոպէկ։*

4) ԱՂԱՑԵԱՆՑ, Ղ.—«*ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ*»։ *Հրատարակութիւն մի խումբ համակրողների։ Թիֆլիս, տպ. «Արօր» Տ. Նազարեանցի, 1890 թ., գինն է 1 ր. 50 կոպէկ։*

5) ՀԵՂԻՆԱԿ ?.—«*ԴԷՊԻ՞ՀԻՍՍԱՑԻՆ ԳԼՈՒԽ*»։ *Թարգմանեց Հ. Մեսրոպ վ. Ծաղիկեան, Մխիթարեան ուխտէն, Վիեննա, Մխիթարեան տպ. 1890 թ., գինն է 35 սանտիմ (15 կոպ.)։*

6) ԹՈՒՄԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ.—«*ԱՐԲԵՑՈՂ ԵՒ ՏԱՌ ՍԷՐ*», *պատկեր իրական կեանքից։ Հրատարակութիւն Նիկող. Աբրահամեանցի, Բազու, տպ. Ս. Տէր-Ցովհաննէսեանցի, 1890 թ., գինն է 30 կոպէկ։*

7) ԴԱՐԴԵԼԻ, ՑՈՎՀԱՆՆԷՍ.—«*ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՑՈՑ*»։ *Հրատարակութիւն Թիֆլիսի ընկեր. հայերէն գրքերի հրատարակութեան, № 28. Ս. Պետերբուրգ, տպ. Սկորոխոդովի, 1890 թ., գինն է ?։*

8) ԱՂԱՆԵԱՆՑ, ԳԻՒՏ *քահ.*—«ՊԱՏԻ ՕՐԱՑՈՑՑ» 1891 *թ. համար, տպարան Ց. Մարտիրոսեանցի, գինն է 75 կոպէկ։*

9) ՋԱՔԱՐԵԱՆ, *հայր* ՊՕՂՈՍ.—«*Գործնական քերականութիւն գերմաներէն լեզուի, ըստ Օթթոյի, առաջին մասն*»—*բառագիտութիւն, Վիեննա, ի վանս պաշտպան Ս. Աստուածածնի, 1890 թ., գինն է 3 ֆրանկ։*

10) ՀԵՂԻՆԱԿ ?.— *Թարգմ. հայր* ԳՐԻԳՈՐԻՍ *վ.* ԳԱԼԷՄԲԵԱՐԵԱՆ, *Մխիթարեան ուխտէն։ «Ուսումնասիրութիւնք լեհացւոց դատաստանագրոյն։ Վիեննա, Մխիթ. տպար., 1890 թ., գինն է* 1.25 *ֆրանկ.*

11) ՄԷՆԷՎԻՇԵԱՆ, Հ. ԳԱԲՐԻԷԼ, *կրօն. Մխիթ.*—«*Ազդարանութիւն ազնուական զարմին Տիւզեանց։ Վիեննա, Մխիթարեան տպար. 1890 թ., գինն է 1 ֆրանկ։*